

**ՃԱՐՏԱՐԱԳԵՏ Թ. ԹՈՐԱՄԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԸ ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՉԽԱՐՀԱՅԻՆ  
ՎԱՏԵՐԱԶՄՈՒՄ ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԿՐԱԾ ՎՆԱՍՆԵՐԸ ՔՆԽՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ  
1918 Թ. ԱՊՐԻԼԻՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՐԾԱՎԱՆՔՈՎ ԻՐ ԿՐԱԾ  
ԿՈՐՈՒՄՏՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

Հայաստանի Առաջին Հանրապետության դիվանագիտական ներկայացուցիչը Վրաստանում 1918 թ. նոյեմբերի 29-ին տեղեկացնում է հանրապետության արտաքին գործերի նախարարին, որ դաշնակից պետությունները Բաքում, բաղադր գրավելուց հետո, 1918 թ. նոյեմբերի 21-ին ստեղծել են մի հանձնաժողով, որը պետք է հաշվարկի ու ճշտի թուրքական զերթերի պատճառած կորուստները, որոնք հատուցելու էր Թուրքիան:

Նույն նպատակով նման մի հանձնաժողով, բանաստեղծ և Թուրամանյանի գլխավերությամբ, ստեղծվում է Թիֆլիսում: Հազարավոր կողոպուտաված ու անօթեան հայեր դիմումներ են ներկայացնում այդ հանձնաժողովին: Դիմունների թվում էր նաև նշանավոր ճարտարապետ Թորոս Թորամանյանը: Էստ որում, եթե նուխի-Արեշի գյուղացինների կորուստները բացառապես նյութական արժեքներ էին, ապա ճարտարապետինք զուտ հոգեոր բնույթ ունեին և վերաբերում էին ոչ հայ ժողովրդին:

Ստորև ներկայացվում է Թ. Թորամանյանի դիմումը՝ ուղղված առաջին համաշխարհային պատերազմում հայ ժողովրդի կրած վնասների վերաբերյալ հաշվի հանձնաժողովին:

ԱՎԱՐԻ ՂԱԶԻՅԱՆ

**Թորամանյան նարարապետից**

1918 թվականի ապրիլ ամսի 15-ին, երբ Ալեքսանդրապոլից Ղարաբիլիսա փոխադրվեցա, Ալեքսանդրապոլ բաղադր թուրքական արշավանքից վտանգված համարելով, որոշեցի անպայման տեղափոխել նաև գրական ու գիտական աշխատություններուս կարեոր մասը մատենագարանի հազվագյուտ և թանկարժեք գրքերով միասին:

Թե՛ իմ նյութական միջոցներուս և թե՛ ուրիշ աննպաստ պայմաններու պատճառով միանգամ ընգմիշտ վտանգից ազատելու համար շի կարողանալով մինչև Տփխիս բերել, մեծ թժվարությամբ կարողացա մինչև Ղարաբիլիսա հասցնել՝ Ալեքսանդրապոլի որրանոցներու կառավարիլ պ. Հովսեփ Սիրդոյանցի միջոցավ, որը բարեհնեց որրերու փոխագրության հատկացված վագոններից մեջ տեղափորել:

Որովհետեւ պ. Հովսեփ Սիրդոյանցը Ղարաբիլիսայից ավելի խորը տանելու հնարավորություն չուներ, ես ստիպված էի դարձյալ անդագար միջոցներ որոնել ավելի հեռացնելու համար, սակայն բոլոր ջանքերս ապարգյուն անցան մինչև Թուրքերու Ղարաբիլիսա ներխուժումը: Հուսահատ ու ճարահաւա, թուրքերու Ղարաբիլիսա խուժելներ կուռ ժամ առաջ, ոռումբերու և գնդակներու տարափի տակ հազիվ կարողացա ընտանյոքս փախչել՝ ամեն ինչ թողնելով դժբախտ ճակատագրին: Գրեթե ոտարորիկ և մերկ այս փախուստես հետո ու սիրյան գիտական աշխատանքներս, այլև ամբողջ ընտանեկան կահկարասիքս ու առնվազն մի ամբողջ տարվան ճոխ պարենավորման մթերքներս միանգամայն շքացան:

Այժմ բաղածս հավաստի տեղեկությունները ապացուցանում են, որ ընտանեկան գույքերիցս ու պարենավորման մթերքներիցս ոչինչ չէ մնացած, իսկ գրական ու գիտական աշխատություններիցս այլանդակված ու անպետքացած աննշան բեկորներ միայն մնացած են:

Կորուստներու մանրամասն ցուցակը կազմել խիստ զժվար է, հետեւյա ցուցակի մեջ աշխատել եմ հնար եղածին շափ խիստ կարեոր մասերը ցուցակագրել, որոնք գրեթե ամբողջական վիճակի էին, իսկ մյուս մասերը ըստ ամե-

նայնի վերականգնել անհնար է, միայն ի նկատի ունենալով իմ տասն և վեց տարվան անդադար աշխատանքիս արդյուր ինելը և անոնց պատմադիտական արժեքը, քեզ բավական լինի ընդհանուր գծերով տված ցուցմունքներս, այս անփոխարինելի կորսույանս ընդհանուր արժեքը վճռելու համար:

#### ԳՐԱԿԱՆ ԱՄԲՈԼՉԱՑԱԾ ԿԱՄ ԱՄԲՈՂՋԱՎԱՐՈՒՄ ՄՈՏ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

##### 1

###### Հայ հարտարապետական բառարան

Մեր հին գրականության, նաև գավառաբարբառներու ու ռամկարաբառներու մեջ գործածված ճարտարապետական բառերու ընդարձակ հավաքածու է այս աշխատությունը: Հնար եղածին շափ մանրամասն ուսումնասիրված և յուսաբանված են յուրաքանչյուր բառի հին և նոր առումները և գործական եղած ժամանակաշրջանները: Բառեր կան, որոնք ոչ հին և ոչ նոր գրականության մեջ գործական չեն, այնուամենայնիվ ժողովուրդը գավառաբարբառի և ռամկարաբառառի մեջ պահեր է շատ անգամ ճիշտ և բնորոշ առումներով: Այս բառերը ընդհանրապես զուտ հայերեն են, մասսամբ ալ եթե օտար՝ աշնուամենայնիվ շատ հին ժամանակների ի վեր հայացած ածանցներով կամ մասնիկներով, որոնք վերին աստիճան բնորոշ և մեկին կերպով յուսարանում են շենքի այս կամ այն մասը կամ շինվածանյութերու այս կամ այն տեսակները ու գործածության կերպերը: Համեմատական ուսումնասիրության և ստուգաբանության ենթարկած եմ խիստ շատ բառեր հին և նոր գրականության և ժողովրդական բարրառներու տվյալներով: Նաև մատնանշված են մեծ մասամբ բառերու աղյուրները գրականության մեջ զործածված պարագայի ամբողջական հատվածներու արտադրությունով: իսկ ժողովրդական բարրառներու մեջեն հավարած բառերուս, նշանակած իմ զործածության երկիրը կամ գավառը և կամ նույն բառերին ինձ տմողների անունները:

Բացի ճարտարապետական բառերե, հավաքել եմ նաև իւրի հետաքրքրական և շահեկան նույնի հայ գեղարիկնեստի ուսումնասիրության համար, մեր հին գրականության մեջ հիշատակված բաղաքարին և դիմորական տարագներու անուններ, ներքին ընտանեկան հարկերու հահամորման և պետանքի հատուկ առարկաներու անուններ, սպառազինման հատուկ բուռող գոռծերներու և դարդանքներու անուններ, մասնավորապես բառաքային և դիմորական պատմուատիճաններու բացատրող շրահանգիրծներու և դարդարանքներու անուններ, որոնք ներկացին կամ գոյություն չունեն, և կամ գործածում են աղավաղված ու անհեմաստ ձևով:

Այս բուռող բառերը գրված են առանձին թերթերու մրա և շառված են աւուրենական կտորով հրեն համար հատկացված տուփի մեջ, որոնց թիմը կոհանի եղու: Հապարիս ու տակաս: Այս աշխատությունս հուստարակության տատրաստ ինիու համար կը պահասին կարգ մո նկարներ և գծառական մորո տատկերներ բառեռու առջևները գրվելու համար, թե այդ աշխատությունն ալ մեծավ մասամբ կատարված էր:

##### 2

###### Հայ զերեզմանեական հարտարապետություն հակառքիստոնեական նի՞ն շրջանիներե միեցի քրիստոնեության XVI դար

Այս աշխատության առաջին մասո կը կազմե հիսուսիդական ասորաբաղուական, սասանական, սուուրիական և բրուգանուական խիստ բնորոշ գամբարաններ, շիռիմներ ու զերեզմաններ՝ Հայաստանի գեղեցմանական ճարտարական պետության համեմատական ուսումնասիրության ուուրության և փոխադառագության ուղեղիծը պարզելու համար:

Իռեռողու մասո բառենառած է Հայաստանի մեջ ոսյություն ունեցող թե նախարիստոնեական և բրիստոնեության մինչև VIII դար կանգնված դամ:

բարաններու, շիրիմներու, տապաններու և ուրիշ բազմատեսակ մաշարձաններու այլազանություններ:

Երրորդ մասը բաղկացած է IX դարեն մինչև XVI—XVII դդ. կանգնված ամեն տեսակ տոհմային դամբարանների, շիրիմների, խաչարձանների և ուրիշ ամեն տեսակ մաշարձաններու նմուշների:

Այս աշխատությունը բաղկացած է քառածալ 800-ի ավելի էջերե 500-, շափ մեծադիր ու փոքրադիր հատակագծերի, լուսանկարների և ձեռագիր դեմակիր տալների:

## 3

Բյուզանդական և ճայկական ճարտարապետության համեմատական ուսումնասիրություն IV դարեն մինչև XV դար

Այս հատորը կազմելու ժամանակ ձեռքի տակ ոմացի եմ բյուզանդական արվեստի ուսումնասիրության համար գրված եվրոպական նշանավոր հեղինակներու հոյակապ և լուրջ աշխատությունները և անոնց հետ համեմատության դնելով իմ բազմաթիվ նյութերս, զանացել եմ պարզել փոխադարձ ազգեցության մասին ծագած հարցերը. մեկին կամ մյուսին որոշ շրջանի առավելությունները և ընդհանուր առմամբ իմ հզրակացություններս հայ. ճարտարապետության նկատմամբ հանդեպ բյուզանդականի:

Այս հատորը բաղկացած է 350-ի շափ քառածալ էջերե, 40-ի շափ մեծ.ու փոքր հատակագծերի և 200-ի շափ լուսանկար պատկերների և դետալների:

## 4

## Զվարթնոց եկեղեցի

Զվարթնոց եկեղեցվո մանրամասն ուսումնասիրության հատակագծերով, ձեռագիր և լուսանկար 300 պատկերներով և քառածալ մոտ 400 էջերով:

## 5

Հայկական նին ամրոցներու և բերդերու ուսումնասիրություն

Հայքի իմ ճանապարհորդած վայրերու մեջ գտնված բերդերեն և ամրոցներեն որոնց գլխավորն է Անին, այս աշխատության մեջ մտած են Կիլիկիա շատ բերդեր, նաև Սեբաստիոն ու Շապին Դարահիսարի բերդերը, որոնք հատկապես ինձ համար լուսանկարված, շափագրված և նկարագրված էին ձեռնհաս բարեկամներու և ծանոթներու միջոցափ, իսկ իմ ճանապարհորդած շրջանին մեջ Ուրարտական տմրոցների սկսած մինչև XV դար շինվածներին համարյառ մեկը շեմ բաց թղթած:

Ամբողջ դործը կր բաղկանա 400 քառածալ էջերե, 10 մեծ.ու փոքր հատակագծերի և 150-ի ավելի մեծ ու փոքր լուսանկարների և ձեռագիր պատկերների:

Տպագրի պատկերներուն մեկ մաթին կիշանիքն պատրաստված են թիֆլիզի մեջ Սուտոցյան—Սողոմոնյանի գործառանում, իսկ մնաղած ատառկերները պետք էր որ պատրաստվեին Ծովասատանում կամ արտասահմանում:

Այս աշխատության իմ կողմանն եղած խմբագությունը կարելի էր մերժացած համարել. միայն պակաս էի համարում ժամանակակից զիտնական մեռազմս դեմքի տեսությունները ու կարծիքները սույն ամբողներու նկատմամբ, թե ոռութ սինառեկ և նպատակահարմար շինություններ են անռնու իրենու ժամանակի համեմատ և թե ներկայիս նոր պատերազմական պետությունը ինչպես եր գնահատե անռնու անցյալը և ներկայ առժեքը Այս առեթու ևս դիմեցի մեր հաւատնե գենուական Հովսեփի Տիգրանյանին և խնդրես մի կարծ ճանապարհությունը դեմակիր կարելու բննելով իմ ալու

Տյուղի աշխատություններս գրել յուր տեսություններն ու կարծիքները գործիս մեջ միաժամանակ տպագրելու համար։ Մեծարգությունը կատարված է Տիգրանյանը խոստացալ սիրով կատարել ինդիրս, սակայն անակնկալ փոխվող հանգամանքները արգելք եղան։

## 6

Կրօնական տահարեներու հատակագծային ձեռքու ուսումնասիրություն, հերանոսական հին դարերեն մինչև մեր օրերը

Այս հատորիս մեջ զանացել եմ պարզել թե ամին ազգերու մեջ ինչպես սկսեց կրոնական տաճարներ կառուցանելու գաղափարը և ինչ ձեռքը ու բարեփոխումների անցնելով ճոխացան ու ընդարձակվեցան այդ տաճարները մինչև քրիստոնեության սկիզբը։ Այսուհետեւ աշխատել եմ լուսաբանել այս հին հեթանոսական տաճարներու ներգործությունները քրիստոնեական տաճարներու հատակագծային ձևակերպման վրա, տեղական հանգամանքներու, ավանդություններու և հավատալիքներու ազդեցության տևկանը։

Ամրող գործը կր ռազկանա քառածալ 250 էշերե, 50 հատակագծերե և լուսանկար պատկերներե։

Այս աշխատության սկիզբի մասին համառոտությունը տպված է «Հուշարաց» շաբաթաթերթի մեջ։

## 7

Գավիթ և ժամատուն հայոց հնագույն եկեղեցիներու մեջ

Այս աշխատության մեջ աշխատել եմ պարզել «գավիթ» և ժամատունը բառերու առանձին նշանակությունները, որ հետզհետեւ շփոթվելով մեկը մյուսին տեղ սկսեր է գործածվի։ Յուց եմ տպած անոնց յուրաքանչյուրին ժառանձանակար, նպատակը՝ բնորոշելով նաև անոնց ճարտարապետական ձեմերն ու հետդհետեւ ավելացած ստորաբաժնումները զանազան պատճառներում։

Այս հատորիս սկզբնական մասին համառոտությունը տպագրված է «Հայոց ազգագրական հանդեսի» մեջ առանց պատկերներու, սակայն իսկականը ունի 300-ի ամենի մեծադիր էշեր, 20 հատակագիծ և մեծ ու փոքր լուսանկար պատկերներ 50 հատ։

## 8

Տեկարի տաճարը

Ընդարձակ ուսումնասիրություն Տեկորի տաճարին անոր հեթանոցական ծագումնեն մինչև XIX դար, թե ինչ փոփոխություններ և ձեռքը անցել է մինչև մեղ հասնելու և ի՞նչ դեր կատարել է հայոց ճարտարապետության մեջ սկսած V դարեն մինչև XV դար իր հատակագծային փոփոխություններով, շինվածակերպով և դարդարանդակներով։

Այս հատորին առաքին մասը տպված է Տիգիսում 33 պատկերներով, իսկ մնացած ավելի ստվար մասը 50 ձեռագիր և լուսանկար պատկերներով մնացած է անտիպա։

## 9

Հին Հայաստաճի թագավորական և իշխանական ապարանքները  
և կենցաղը անոնց մեջ

Այս աշխատության համառոտությունը տպվեցավ «Գեղարվեստի» վերջին VI համարում։ Բնադիրը լադկացած է մոտավորապես 200 էշերե բազմաթիվ

\* Այս և հետագա ընդգծումներն ըստ բնագրի։

Վկայություններով և բնդարձակ ծանոթություններով, 40 հատ լուսանկար և ձեռագիր պատկերներով:

ԿԻՍՈՎԱՆ ՄՇԱԿԱՎԱԾ ԵՎ ՀԱՌԱՋԻԿԱՑԻ ՄՇԱԿԱՆԵԼԻ ՀՈՒՄ ՆՅՈՒԹԵՐ. ԹԵ ԱՌԱՋԻ ԵՎ ԹԵ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄՇՍ ՀԱՌԱՋԻԿԱԿՈՒԹՅԱՆՆ ՀԱՅՈՑ ՀԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԱՏՄՈՒԹՅԱՆ ՏԵԽՈՏԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Որովհետեւ 16 տարվան անընդհատ աշխատությանս նպատակն էր հնար և ղածին շափ առատ նյութեր հավաքելով, նախաքրիստոնեական շրջաննեն մինչև քրիստոնեության XV դարու հայոց ճարտարապետության պատմությունը կազմել, ուստի այդ նպատակով, ամեն դարաշրջաններու պատկանող հազարավոր ճարտարապետական և գեղարվեստական նմուշներ հավաքելիս զատ, պատրաստած ունեի պատկառելի քանակությամբ գրական նյութ շայոց պատմական գրականութենեն, հայ և օտար բազմաթիվ անվանի հեղինակներնեն, որոնց ընկերացած էին իմ տեսություններս, դիտողություններս, ընդարձակ ծանոթություններս ու վկայություններու ամբողջական արտագրություններս, նաև քննադատություններս այս կամ այն ընդհանրացող հոռի և թյուր կարծիքներու և վճիռներու դեմ դրական ապացույցներով, Այս ամենը՝ գրված էին առանձին մեծ ու փոքր տեսրակներու և առանձին թերթերու վրա խնամքով դասավորված իրենց կարգին, Այս թղթերու մեջ էին նաև ամեն տարի Ս. Պետրոբուրգ գիտությանց ճեմարանին և Հնագիտական մասնաժողովին ուղարկած պաշտոնական տեղեկագրերու օրինակները, բազմաթիվ գիտական թրթակցություններ Տաճկահայաստանի կամ Կովկասի իմ շի կարողացած այցելած վայրերուս մեջ:

Այժմեն շեմ կարող ըստել թե ինչ ծավալ պիտի ստանար այս թղթերու ահագին կույտը հրատարակվելով, որովհետև մի մեծ սնտուկի մեջ կափարիչը հազիկ փակվելու շափ կոխված էին. այնուամենայնիվ, 1913 թ. Վիեննալի մեջ, ճարտարապետության պատմական ուսումնասիրությանս հրատարակության համար մեծանուն գիտնական պրոֆ. Յ. Ստգիգովսկիի հետ կնքած պայմանագրությանս համաձայն, հանձն առած հազար երեսից ոչ պակաս տեքստ կազմելու բովանդակ նյութու այս թուղթերնեն և տեսրակներնեն պիտի հանմեին. թեև պատմություննես անկախ առանձին հրատարակությանց համար ալ կալին շատ հյութեր:

Այս շարատանց աշխատությամբ ձեռք բերած արդյունքիս մամուկի սրբականություն ուսումնար տիեսներու բախտը պիտի ունինալի 1914 թիհ աշնա. նու նույն թմի հոկտեմբեր կամ նոյեմբեր ամիսներուն մեջ ես կոկին պիտի վերադառնահի Վիեննա հրատարակության սկսելու համար գերմաներնեն լեզմով, որուն թարգմանությունը հանձն առած էր պայմանագրում ալ. Լ. Լիսիցյանը, նր, ոռուն մրա միայն յիշուի վատահություն ուներ պրոֆ. Յ. Ստգեգովսկի:

Դժբահիտարար նույն տարին համախարհաւին պատերազմո բռնկվելով ճանապարհներո փակմելուն և հս և կարողաւագ գնաւ միխառբերով Հետո բուրո հրատարակեւի նույներս Ամեւորդ է ըստ կրկին թե ի՞ն գերմանուկային ճեծ թափեց այս կանոն գնաւ ձեռք բերած աշխատություններս փրկեւու և մերօապես ուժահաւ ճանաւութիւր զս դրկեց ամին տեսակ հոգեկան ֆիդի կակուն և նույնական միեւթառություններս:

Ոռակու մեռը հն, գառափար կազմվի թե ին, եարգով ուսսամորած Է առ Հում նույներս հառաջիկալին շահագործելու համար, ստորի ցույց կուտամ անոր մոտավոր կարգը:

Անին իր մոտակա շրջակաւոռու, որոնք կարող էին Անիի անմիջական մասերը և թաղերը համարվել, Միայն այս մասու արդեն մի պատկառելի համորի նյութ էր:

## 2

Շիրակը իր մեջ պարունակած բոլոր մեծ ու փոքր հիշատակարաններով, որոնց գլխավորներն են հետեւյալները:

Հոշավանք (Հոռոմոսի վանք); Մյուս Հոշավանք Ախուրյանի ձախ ափին: Կարմիր վանք. Ախուրյանի աջ ափին հարկով գյուղի դիմաց: Տայլար: Թագնայր (Ղոգիչա): Արդու առիճո (Աղաջա): Ուղուզի: Կարմիր վանք (Բայրախտար գյուղի մոտ. ըստ հ. Ալիշանի Դպրեվանք): Շիրակավան: Տիգնիս: Մարմաշեն (Ղանլիջա): Խաչի ձոր: Ցոթը մեծ միակամար կամուրջներ Ախուրյանի վրա, ոմանք երկարկանի:

## 3

Արշարունիք և Երասխածոր, որտեղ աշխատել եմ հետեւյալ հիշատակարաններու վրա.

Ալամանի Ս. Անանիա: Տեկոր: Խծկոնք (Բեշքիլիսա): Մրեն իր ամբողջ շրջակայրով: Բաղարան, ամբողջ շրջակայրով: Երվանդաշատ. Հին ամրոցներ. կամուրջներ, եկեղեցիներու և շինությանց մնացորդներ:

## 4

Արագածի ամրող շուրջը—քիչ բացառությամբ) և անկեց մինչև Ազատ գետի հունը:

Օրթաքիլիսա, Դարրանդ, Ղափլի, Տիրաքլար, Հոռոմ: Մաշիդու: Հառիճ: Արդիկ, Մահմուտճուր, Շիրվանճուր, Սեռկյուտլյու: Մազարճուր, Մաստարա, Մեծ Թալին, Փոքր Թալին, Արուճ (Թալիշ): Բաշարարան: Ղարանլուղ: Ղարաքիլիսա, Մոլլա—Ղասում: Տամբրու: Եղվարդ: Հոհաննա վանք: Կարբի: Մուղնի: Էջմիածին (բոյոր շրջակա հիշատակարաններով), Երեան: Ավան: Գառնի: Գեղարդ: Դվին: Արտաշատ:

## 5

Ընդարձակ թարգմանություններ եվրոպացի գիտնական ճանապարհորդներու աշխատություններին թե Հայաստանի և թե ուրիշ արևելյան երկիրներու վերաբերյալ: Այս թարգմանություններուն ավելցած են իմ ժանոթություններս և քննադատական դիտողություններս:

## 1

Որովհետև մինչև 1912 թ. գծագրական աշխատություններ ինչ որ ունեի փոխադրած էի Վիեննա տպագրված յուսանկար պատկերներովս միասին, և ըստ իմ պայմանագրի թողած էի համալսարանի գեղարվեստապատմաբանական լսարանին մեջ ստանալով ընկալագիր, ինքս վերադարձա Կովկաս, որպեսզի ամբողջացնեմ սակաս մնացած որոշ աշխատություններս և եթե կարելի է ավելացնեմ նաև նոր նյութեր:

Այս ճանապարհորդություններս, ճանապարհները փակվելուն պատճառով տեսեցին երեք տարի (փոխանակ մեկ տարիի): Ուստի այս երեք տարվան ժամանակամիջոցին մեջ, գծագրական կես թերթի մեծությամբ թերթերու մրա հավաքած ու ոճագրած ունեի պլաններ, շենքի ճակատներ, հատվածականներ, և բազմաթիվ դետայններ՝ սկսած Ալեքսանդրապոլի շրջանին մինչև Ազատ գետի սահմանները, այս միննույն տեղերու մեջ, որոնք հիշմած են նախրնթառ 4-րու հոդվածիս մեջ: Զեմ հիշում յափ, թե քանի՞ հատ էին այս պատկերները, սակայն համոզված եմ որ 150 հատեն պակաս չէին:

## 2

Մոտամորապես ուսուասուն տետուակներու մեջ հանոնամորատես ամփոփած էին 14 տարօտն մանրամասն շափառություններու գծագումած մանր գետաւններու: Այս աշխատությունը կատարել էի, որպեսզի մեկ կողմէ հնարավորություն ունենամ դժագրած պատկեռներու չափերու ճշգությունը մե-

ըրստոգելու, մյուս կողմանն պատահաբար կորած կամ փշացած պատկեր-ները ճշտութիւմը վերականգնելու համար:

3

- (1) Անիի միջնաբերդի ընդարձակ հատակագիծը, 005 թ. ա. չափով:
- (2) Անիի ամբողջական հատակագիծը շրջակա պառիսպներու բոլոր մանրամասնությամբ, 005 թ. ա. չափով: Այս դժվարին աշխատությունը յերին աստիճան խնամքով պատրաստած էի նախ քաղաքի և պարիսպներու լիակատար ուսումնասիրության համար, հետո մտադիր էի այդ քարտեզից պատրաստել քաղաքի ընդհանուր պանորաման՝ նար եղածին չափ վերականգնելով ծանոթ շենքերը և պարիսպները իրենց տեղին վրա:

#### Լուսանկարչական աշխատանքներ

1) Գրական և գծագրական աշխատություններու գուգրնթաց կատարում էի նաև լուսանկարչական աշխատանք իբրև փաստական և համեմատական անհրաժեշտություն բովանդակ շրջագայած վայրերու մեջ: Այս աշխատությանն արդյունքն էր հետեւյալ քանակությամբ նեկաթիվներ:

1200 հատ նեկաթիվ  $18 \times 24$

740 " "  $13 \times 18$

650 " "  $9 \times 12$

2) Վերոգրիալ լուսանկարներն մանր բնդօրինակություններ ձեռագիր տերստերու մեջ կպցնելու և վրաները նշանագրելու համար, որոնց թիվը կոչաներ 1000 հատի  $9+12$  չափով:

3) Օտար հեղինակներու գործերն հանված բնդօրինակություններ 9×12 չափով, մոտավորապես 500 հատ:

4) Ունեցածս բուոր նեկսութիւններից տպված պատրաստ լուրաքանչյուրին 3—5 օրինակ մաթուիի թղթի վրա:

#### Լուսանկարչական գործիքներ

Ավելոր չեմ համարում արձանագրել նաև լուսանկարչական գործիքներս, որոնք ամենաբնիւր տիսակից էին.

1 ապարատ  $24 \times 30$

1 օսկրտիֆ  $30 \times 40$  «գերց» տակոր III սեռ, որւաւ տնասդիկմաթ

1 օրերտիֆ  $13 \times 18$  հատուկ ճարտարապետական հիշատակառաններու համար

1 թելեօրերտիֆ 7 անգամ մեծացնող նուլնպես «Գերց»:

#### Մատենադարան

Գրեթե ամոռդությամբ բարորարսական ուժոհաճույրի դռն եղած է հազարուու և թանկադին հատորներու ճնիւացած մատենառարանս, որուն կազմության համար նույնպիս 16 տարի շարունակ ոչ մի դոհողություն չեմ խնայած: Պատմական գեղարմսետի և ճարտարապետության վերաբերյալ ելքրապական գիտնականներու հին և նոր ուսումնասիրություններին ոչ մեկը պակաս չէին մատենադարանիս միջը: մասնավորապես մեծ տեղ րոնած էին ֆրանսական հրատարակությունները:

Կարենոր փաստարդիքեր, գիտական թղթակցություններ, տպագրված ու արտագրված հատվածներ

1. Պատմական գեղարմսետի և ճարտարապետության վերաբերյալ ամեն լեզվի հանդիսների և օրաթերթիր կտրված հատվածներ և բնդօրինակություններ:

2. Գիտական և ոլոտմական նյութերու վրա կարենոր թղթակցություններ վկանեն, Մուշին, Ատանային, Թոգութին, Աերաստիալին և Շուպին Գարաճի սարեն այն տեղերը գտնված հին հիշատակարաններու նկատմամբ:

3. Ա. Պետերբուրգ գիտությանց ճեմարանին և կայս. Հնագիտական մասնաժողովին զրկածս ամեն տարվան տեղեկագրերուս պատճենները:

4. Ճարտարապետական վկաւականս Կ. Պոլսո գեղարվեստից ճեմարանին ստացված:

5. Ճարտարապետական վկայականիս վերահաստատությունը Սոֆիայի մեջ, որով ինձ իրավունք տրված էր Համայն Պուկարիո մեջ ազատ գործելու:

6. Պուկարիո Վառնա բազարի բաղաքապետության կողմանն տրված պատվագոր գործառնությանս նկատմամբ պատվո վկայականս:

7. Անհատական վկաւականներ առանձին-առանձին շենքերու տերերու կողմանն, որոնց համար աշխատել եմ կամ շինություններ դեկավարել:

8. Ս. Պետերբուրգի գիտությանց և գեղարվեստից ճեմարաններու միացյալ վկայականները, որ տրվեցավ 1908 թ., երբ մինչև այն աշխատած գործերս զրկած էի գիտական գնահատության համար Այս վկայականներս մասնակի կամ ամրողովին հրատարակված կան Թիֆլիդի հայերեն և ռուսերեն լրագրաց մեջ և Կ. Պոլսո «Բյուզանդիոնի» մեջ: Նմանօրինակ վկայություններ կային նաև Վիեննայի համալսարանի կից ինստիտուտի կողմանն, որոնց մեկ մասը նույնպես հրատարակված է տեղական լրագիրներու մեջ:

Երբ ի նկատի առնվի այս ահագին կորուստներուս գիտական և պատմական արժեքը, բնականարար նյութական ոչ մի արժեք չի կարող փոխարինել անոնց: Ոչ միայն հայ ժողովուրդի ամեն մի դասակարգին, այլև եվրոպական մի քանի բարձրագույն գիտական հաստատություններու հայոնի է նահատակության հասնող անձնագոհություններս և գերմարդկային ջանքերս, սկսած գործս մինչև այս աստիճանի հասցնելս՝ որպիսին համարական աշխատակցությամբ մեծամեծ ծախքերով նույնքան ժամանակի մեջ պետական հիմնարկություններն այ այստական կարող էին ունենալ: Շովանուակ տասնեւիեռ տարի, դիշեր ցերեկ նվիրվել եմ աշխատության հաջողության համար՝ ոչ մի զըրկանքի ու տառապանքի առջև կանգ չառնելով: Զոհել էի ամբողջ անցյալս ու ներկաս, իսկ ներկա սոսկալի աղետը ցախչախեց նաև ապագայի վրա դրած բոյոր հույսերու ծերության հասակի մեջ ոտք ըռած սկանուած թողելով դիս այսու կարու ամենատարրական կենսական պիտույնիուս:

Կորուստներուս գիտական ու պատմական արժեհու մասին սեղմախոս մկանը են Ս. Պետերբուրգի գիտությանց և գեղարվեստական ճեմարաններու միացյալ հանձնաժողովի տված վկայականներն ու Վիեննայի համարականի են գեղառվեստապատմարանական ինստիտուտի վկալություններին դատ հնձ հնքած ուամանագիոր հայ ճարտարապետություն պատմության հրատարակության համար: Այս պայմանագրով ես հանձն առած էի ռասի երիտ հաղուրի ամեիդ ձեռագիր և լուսանկար պատկերներու ոռեւ նաև 1000 երեսեն ու սրակաս «տեսօստու»: Այս իմաստաթղթերս դտնվում էին ձեռագիրներու առաջմած մեծ սնութուիիս մեջ, որոնք եթե բարերուսական մալուգություններու ոու ոնացեն, անուամենանիմ հուստառակված կան Տփխիսի, Պետերբուրգու և Կ. Պոլսու ուսադիրներու մեջ նույն հսկ հակառակ դեպքում ոժվար չէ նաւուիմ մերբուրու գիտական հաստատություններուն պատճեններ ստանալու համար:

Ոսումհետեւ հնձ հասած այս մեծ աղետոր զեթ մասամբ թեթեառնիու և ոեուու Հառաօհեաւաւին աշխատություններս վերականգնելու միակ հուստ ու միջուր նութեական միսարինության վրա կր կաւանա: Հուստ ունեմ, որ տեղեւառեսու և ներատի առնող հանձնաժողովը, զգալով կորուստի ծանրությունը՝ թի անձնաւան: Եթե՝ համարական տեսակետու, եռ ցանա ամեն միջուր և ոոր ոնի նաւակածս նութեաւան համեստ արժեհուսու միուառինի և հնարաւորություն տաւ ինձ մեսարկելու կյանքիս չափ սիրած ու նվիրածս աշխատություններոււ:

## ՑՈՒցԱԿ

Առւրլի (Հին արժեք)

1. Հայ ճարտարապետական բառարան	8000
2. Հայ գեղեզմանական ճարտարապետություն նախարրիստոնեական հին շրջաններե մինչև XVI դար	5000
3. Բյուզանդական և Հայկական ճարտարապետության համեմատական ուսումնասիրություն IV դարեն մինչև XV դար	4000
4. Զվարթնոց եկեղեցի, Հնագիտական և ճարտարապետական ուսումնասիրություն	4000
5. Հայկական հին ամրոցներու և բերդերու ուսումնասիրություն	5000
6. Կրոնական տաճարներու հատակագծալին ձեռքու ուսումնասիրություն, Հեթանոսական հին դարերեն մինչև մեր օրերը	3000
7. Գավիթ և ժամատուն Հայոց հնագույն եկեղեցիներու մեջ	3000
8. Տեկորի տաճարը Բ. մաս	2000
9. Հին Հայաստանի թագավորական և իշխանական ապարանքները և կենցաղը անոնց մեջ	5000
ԳՈՒՄԱՐ	39000
10. Մատենադարանս հազվագյուտ գիտ. հատորներով.	6000
Կիսովին մշակված և հառաջիկային մշակելի հում նյութեր, թե առանձին և թե ընդհանուր մեծ հրատարակության—Հայոց ճարտարապետության պատմությանս տեքստ կազմելու համար.	80000
Լուսանկարչական բոլոր աշխատանքներս մեծ ու փոքր նեկաթիվ և բողիթիվ սպեկի քան 5000 օրինակ.	45000
Գումար հարյուր վաթսոն շորս հազար ռ. (Հին արժեքով) Մատենադարանիս հավելյալ արժեքով հարյուր յոթանասուն հազար ոռուրլի խաղաղ ժամանակի արժեքով.	170000

Թ. Թուամանյան

9/22 Հունվար 1919

Տիկիւ

ՀՀ ՊԿՊԱ. ֆ. 221, ո. 1, գ. 53, թթ. 111—118 շրջ.: Թեազիր: Զեռազիր